



*Համարը N 1124-Ն*  
*Տիպը Որոշում*  
*Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2019.09.11/58(1511) Հոդ.781*  
*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն*  
*Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 12.09.2019*

*Տեսակը Հիմնական*  
*Կարգավիճակը Գործում է*  
*Ընդունման վայրը Երևան*  
*Ընդունման ամսաթիվը 22.08.2019*  
*Ստորագրման ամսաթիվը 02.09.2019*  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 522-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 օգոստոսի 2019 թվականի N 1124-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 522-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 37-րդ հոդվածի 1-ին մասը և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 522-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ն. Փաշինյան**

Հավելված  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն մեթոդաբանությամբ կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի (այսուհետ՝ ռիսկի համակարգ) կիրառման հետ կապված ընդհանուր մոտեցումները, սահմանվում է ռիսկը, դրա հաշվարկման ձևը, տնտեսավարող սուբյեկտների դասակարգումը՝ ըստ ռիսկայնության և ռիսկի գնահատման հետ կապված այլ սահմանումներ:

2. Ռիսկի համակարգի նպատակն է՝

- 1) սահմանել, բացահայտել և վերլուծել տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառների ռիսկերը.
- 2) դասակարգել տնտեսավարող սուբյեկտները՝ ըստ ռիսկայնության խմբերի՝ բարձր, միջին, ցածր.
- 3) վարել տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազա՝ ըստ գործունեության ոլորտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների.
- 4) ռիսկի համակարգի միջոցով տեսչական մարմնի ստուգումները նպատակաուղղել դեպի այն ոլորտները և վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտները, որոնք առավել ռիսկային են.
- 5) ռիսկի վրա հիմնված ստուգումների միջոցով նվազեցնել տնտեսավարող սուբյեկտների ռիսկի աստիճանը՝ մինչև առավել ցածր հնարավոր ռիսկի մակարդակը:

3. Ռիսկը («Հիգիենիկ և համաճարակային ռիսկ», «Դեղերի շրջանառության ռիսկ», «Առողջապահական ռիսկ», «Աշխատանքի ռիսկ») տեսչական մարմնի վերահսկողության տեսանկյունից ըստ բնագավառների («Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման», «Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության», «Բժշկական սպասարկման», «Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման») տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում մարդու կյանքին, առողջությանը վնաս հասցնելու հավանականությունն է՝ հաշվի առնելով այդ վնասի ծանրության աստիճանն ու ակնկալվող բացասական հետևանքները:

4. Ռիսկի գնահատման համար իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազայի ձևավորում և պարբերաբար թարմացում՝ ըստ ոլորտային և անհատական ռիսկայնության չափանիշների:

**II. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ**

5. Տեսչական մարմինը, ըստ չորս բնագավառների, վարում է տվյալների բազա՝ ըստ տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով՝ վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է, ինչպես տեսչական մարմնի կանոնադրական գործառնությունների իրականացման արդյունքում առկա տեղեկատվությունից, այնպես էլ տեսչական մարմնի տեղեկատվական բազայում չընդգրկված և ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հիման վրա իրենց տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից:

6. Տվյալների բազայի նպատակն է որոշել և դասակարգել տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ առկա տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա:

7. Տվյալների բազան պարբերաբար թարմացվում, լրացվում և ծառայում է տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգի նպատակներին:

**III. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆ ՌԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ**

8. Տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտի ոլորտային և անհատական ռիսկերի հանրագումար, որն ունի առավելագույնը 200 միավոր ընդհանուր կշիռ:

9. Ոլորտային ռիսկը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտների հետ կապված ռիսկի չափանիշ է, որը

հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների՝ հաշվի առնելով այդ վնասի ծանրության աստիճանը: Եթե տնտեսավարող սուբյեկտը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում, ապա ոլորտային ռիսկը հաշվարկվում է ամենառիսկային ոլորտի տվյալներով:

10. Անհատական ռիսկը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտների հետ կապված ռիսկի չափանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների պարբերականությունը, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ չափանիշները: Անհատական ռիսկը հաշվարկվում է՝ ըստ անհատական ռիսկի ռիսկայնության չափանիշների հիման վրա հաշվարկված ռիսկայնության միավորների հանրագումարով:

11. Խախտումների պարբերականության և խախտումների վերացմանն ուղղված գործողությունների հիման վրա գնահատված ռիսկայնության չափանիշի կիրառումը, դրանց հաշվարկումն ու գնահատումը սահմանվում է հետևյալ կերպ՝

- եթե տնտեսավարող սուբյեկտը նախորդ տարում կատարել է 5 և ավելի խախտում, ապա խախտումը համարվում է պարբերական, և ըստ բնագավառների տրվում է անհատական ռիսկի տվյալ բաղադրիչի մասով առավելագույն միավոր: Հակառակ դեպքում պարբերական չի համարվում, և ըստ բնագավառների՝ տրվում է անհատական ռիսկի տվյալ բաղադրիչի մասով 0 միավոր:

- տնտեսավարող սուբյեկտի կողմից արձանագրված խախտումները վերացնելու դեպքում ըստ բնագավառների տրվում է անհատական ռիսկի տվյալ բաղադրիչի մասով 0 միավոր: Հակառակ դեպքում ըստ բնագավառների տրվում է անհատական ռիսկի տվյալ բաղադրիչի մասով առավելագույն միավոր:

12. Տնտեսավարող սուբյեկտներում՝ ըստ չորս բնագավառների, որտեղ սույն հավելվածով նախատեսվող ռիսկի համակարգը ներդնելուց հետո տեսչական մարմնի կողմից իրականացվել է ստուգում, ռիսկը գնահատվում և դասակարգվում է ոլորտային և անհատական ռիսկայնության միավորների հիման վրա՝ ամբողջությամբ: Առավելագույն հնարավոր ռիսկը՝ 200 միավոր:

13. Տնտեսավարող սուբյեկտներում՝ ըստ չորս բնագավառների, որտեղ սույն հավելվածով նախատեսվող ռիսկի համակարգը ներդնելուց հետո տեսչական մարմնի կողմից չի իրականացվել ստուգում՝ ռիսկը գնահատվում և դասակարգվում է միայն առավելագույն հնարավոր ռիսկի հիման վրա (ոլորտային ռիսկի առավելագույն հնարավոր միավորի և անհատական ռիսկի առավելագույն հնարավոր միավորների հանրագումարով): Անհատական ռիսկի համապատասխան (ստուգաթերթով գնահատված) բաղադրիչի բացակայության դեպքում ռիսկայնության միավորի համար պայմանականորեն տրվում է 0 միավոր: Առավելագույն հնարավոր ռիսկը՝ 150 միավոր:

14. Տնտեսավարող սուբյեկտների դասակարգումն ըստ գնահատված ռիսկի իրականացվում է հետևյալ մեխանիզմով՝ համաձայն N 1 աղյուսակի՝ առավելագույն հնարավոր ռիսկայնության միավորի մինչև 30 տոկոսը ներառյալ ստացած տնտեսավարող սուբյեկտը, դասակարգվում է ցածր ռիսկայնության խմբում, 30-ից բարձր մինչև 70 տոկոսը ներառյալ ստացած տնտեսավարող սուբյեկտը՝ միջին ռիսկայնության խմբում, իսկ 70-ից բարձր մինչև 100 տոկոսը՝ ներառյալ ստացած տնտեսավարող սուբյեկտը՝ բարձր ռիսկայնության խմբում, բայց ստուգում իրականացնող մարմինը բարձր ռիսկայնության խմբում ընդգրկում է իր կողմից ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

Աղյուսակ N 1

Ցածր	Միջին	Բարձր
(0, 30%]	(30%, 70%]	(70%, 100%]

15. Տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկի համապատասխան (ստուգաթերթ) բաղադրիչը ստուգաթերթով գնահատված ռիսկայնության միավորն է, որը հաշվարկվում է միննույն տարվա ընթացքում իրականացված ստուգումների, ստուգումներից հետո տրված հանձնարարականների կատարողականի և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում լրացված ստուգաթերթերից ստացված միավորների համաձայն:

16. Ստուգաթերթի հարցաշարում ընդգրկված յուրաքանչյուր վերահսկողական բնույթի հարց ունի ռիսկայնության միավոր: Տնտեսավարող սուբյեկտում ստուգումն ավարտելուց հետո լրացված ստուգաթերթի արդյունքներով գնահատվում է անհատական ռիսկի համապատասխան (ստուգաթերթ) բաղադրիչը, որը կազմում է ստուգաթերթի այն վերահսկողական բնույթի հարցերի ռիսկայնության միավորների հանրագումարը, որոնց պահանջները խախտվել են, և ստուգաթերթի համապատասխան սյունակում ու տողում նշվել է «Ոչ» պատասխանը: Տվյալ տարում լրացված բոլոր ստուգաթերթերի ռիսկայնության միավորները մշակվում են:

17. Կատարողականի ստուգման արդյունքում լրացված ստուգաթերթի դրական «Այո» պատասխանով հարցերի ռիսկայնության միավորները հանվում են նախորդ ստուգաթերթով գնահատված ռիսկայնության միավորից:

18. Տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկի համապատասխան (ստուգաթերթ) բաղադրիչին տրվում է առավելագույնը 50 միավոր, որը հաշվարկվում է ըստ ստուգաթերթի հարցերին տրված ռիսկայնության միավորների և կշիռների համամասնությամբ այնպես, որ ռիսկայնության միավորների և կշիռների արտադրյալների գումարը կազմի 50 միավոր:

**IV. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

19. Ոլորտային ռիսկը գնահատվում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների (ՏԳՏԴ) դասակարգմամբ գործառույթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում՝ համաձայն N 2 աղյուսակի, որի առավելագույն հնարավոր միավորը 100 է:

**Աղյուսակ N 2**

Կոդ	Գործունեության տեսակը	Միավորը
A (ԷՅ)	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	5
B (ԲԲ)	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	50
C (ՄԲ)	Մշակող արդյունաբերություն (բացառությամբ C21)	40
C21 (ՄԲ21)	Դեղագործական արտադրանքի արտադրություն	40
D (ԴԲ)	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	40
E (Բ)	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	100
F (ԷՖ)	Շինարարություն	30
G (ՋԲ)	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում (բացառությամբ G46.46.2, G47.73)	50
G 46.46.2 (ՋԲ 46.46.2)	Դեղերի մեծածախ առևտուր	5
G 47.73 (ՋԲ 47.73)	Դեղերի մանրածախ առևտուր դեղատներում	10

H (ԷՅՁ)	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	40
I (ԱՅ)	Կացության և հանրային սննդի կազմակերպում	50
J (ՋԵՅ)	Տեղեկատվություն և կապ	30
K (ՔԵյ)	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	10
L (Էլ)	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	30
M (Էմ)	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	5
N (Էն)	Վարչարարական և օժանդակ գործունեություն	20
O (Օ)	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն	20
P (Փի)	Կրթություն	45
Q 86 (Քյու 86)	Առողջապահություն	60
Q 87 (Քյու 87)	Բնակչության սոցիալական սպասարկում	40
Q 88 (Քյու 88)	Սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման	20
R (Առ)	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	40
S (Էս)	Սպասարկման այլ ծառայություններ	40

T (ԹԻ)	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0
Ս (Յու)	Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն	0

20. Տնտեսավարող սուբյեկտների անհատական ռիսկը գնահատվում է ըստ հետևյալ բաղադրիչների և նրանց ռիսկի միավորների հանրագումարն է: Անհատական ռիսկի բաղադրիչներն են՝

1) աշխատողների թիվը, գնահատվում է համաձայն N 3 աղյուսակի.

**Աղյուսակ N 3**

Աշխատողների թիվը	Միավորներ
1-100	5
101-200	10
201-300	15
301-400	20
401-500	25
501 և ավելի	30

2) նախորդ տարում N 2 աղյուսակում նշված տնտեսական գործունեության տեսակների Առողջապահություն (Q86) դասակարգչով գործառույթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում մատուցված ծառայությունների քանակը, առավելագույնը՝ 40 միավոր՝ համաձայն NN 4 և 5 աղյուսակներից ստացված ռիսկայնության միավորների հանրագումարի.

**Աղյուսակ N 4**

Հոսպիտալացված հիվանդների թիվը	Միավորներ
1-5000	5
5001-10000	10
10001-20000	15
20001 և ավելի	20

**Աղյուսակ N 5**

Հաճախումների թիվը	Միավորներ
1-5000	5
5001-10000	10
10001-20000	15
20001 և ավելի	20

- 3) տնտեսավարող սուբյեկտներում արձանագրված և տվյալ բնագավառին վերաբերող պարբերաբար խախտումները, առավելագույնը՝ 10 միավոր.
- 4) տնտեսավարող սուբյեկտներում խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, առավելագույնը՝ 10 միավոր.
- 5) ստուգաթերթերի հիման վրա գնահատված ռիսկայնության միավորը, առավելագույնը՝ 50 միավոր:

**V. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

21. Ոլորտային ռիսկը տնտեսավարող սուբյեկտների համար գնահատվում է ըստ նրանց կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ սահմանված բժշկական օգնության և սպասարկման տեսակների, հետևյալ կերպ՝ մեկ բժշկական օգնության և սպասարկման տեսակի ռիսկայնության կշիռը հաշվարկվում է առավելագույն 65 միավորի և բժշկական օգնության և սպասարկման բոլոր տեսակների քանակների հարաբերությամբ: Տնտեսավարող սուբյեկտի ոլորտային ռիսկի միավորը տվյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների քանակի և մեկ տեսակի ռիսկայնության կշռի արտադրյալն է:

22. Տնտեսավարող սուբյեկտների անհատական ռիսկը գնահատվում է ըստ հետևյալ բաղադրիչների և նրանց ռիսկի միավորների հանրագումարն է, որի առավելագույն հնարավոր միավորը 135 է: Անհատական ռիսկի բաղադրիչներն են՝

- 1) նախորդ տարում պացիենտների հաճախումների քանակը, առավելագույնը՝ 40 միավոր, համաձայն NN 6 և 7 աղյուսակներից ստացված ռիսկայնության միավորների հանրագումարի.

**Աղյուսակ N 6**

Հոսպիտալացված հիվանդների թիվը	Միավորներ
1-5000	5
5001-10000	10
10001-20000	15
20001 և ավելի	20

**Աղյուսակ N 7**

Հաճախումների թիվը	Միավորներ
1-5000	5

5001-10000	10
10001-20000	15
20001 և ավելի	20

2) նախորդ տարում հիվանդանոցային մահացության դեպքերի թիվը, առավելագույնը՝ 5 միավոր՝ համաձայն N 8 աղյուսակի.

**Աղյուսակ N 8**

Մահացության դեպքերի թիվը	Միավորներ
1-5	1
6-10	2
11-20	3
21-30	4
31 և ավելի	5

3) բուժաշխատողների թիվը, առավելագույնը՝ 20 միավոր՝ համաձայն N 9 աղյուսակի.

**Աղյուսակ N 9**

Բուժաշխատողների թիվը	Միավորներ
1-20	5
21-50	10
51-100	15
101 և ավելի	20

4) տնտեսավարող սուբյեկտներում արձանագրված և տվյալ բնագավառին վերաբերող պարբերաբար խախտումները, առավելագույնը՝ 10 միավոր.

5) տնտեսավարող սուբյեկտներում խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, առավելագույնը՝ 10 միավոր.

6) ստուգաթերթերի հիման վրա գնահատված ռիսկայնության միավորը, առավելագույնը՝ 50 միավոր:

**VI. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

23. Ոլորտային ռիսկը գործունեության տեսակի ռիսկն է, որի առավելագույն միավորը 100 է: Ոլորտային ռիսկը



գնահատվում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության երեք (արտադրություն, մեծածախ իրացում, դեղատնային) հիմնական տեսակներից յուրաքանչյուրի համար՝ համաձայն N 10 աղյուսակի: Ոլորտային ռիսկի բաղադրիչներն են.

- 1) ըստ ռիսկի տեսակի՝ դեղի պիտանիության ժամկետի խախտում, պահպանման և տեղափոխման պայմանների խախտում, կեղծում և պետական գրանցման գործընթացի խախտում.
- 2) ըստ վերջնական սպառողի վրա ունեցած ազդեցության որքանով է անմիջական կամ միջնորդավորված տնտեսավարող սուբյեկտի շփումը վերջնական սպառողի հետ.
- 3) ըստ ռիսկի տարածման տիրույթի՝ որքան լայն է կամ տեղայնացված ռիսկի տարածման տիրույթը:

**Աղյուսակ N 10**

Գործունեության տեսակ	Ռիսկի տեսակ					Վերջնա-կան սպառողի վրա ազդեցություն	Ռիսկի տարածման տիրույթ	Ընդամենը
	Պիտանիության ժամկետ	Պահպանման պայմաններ	Կեղծում	Պետական գրանցում	Ընդամենը			
Արտադրություն	5	10	10	5	30	10	20	60
Մեծածախ իրացում	0	10	10	20	40	20	40	100
Դեղատնային	10	10	10	10	40	20	10	70

24. Տնտեսավարող սուբյեկտների անհատական ռիսկը գնահատվում է ըստ հետևյալ բաղադրիչների և նրանց ռիսկի միավորների հանրագումարն է՝ համաձայն N 11 աղյուսակի: Անհատական ռիսկի բաղադրիչներն են՝

- 1) տնտեսավարող սուբյեկտի նախորդ տարում տարեկան շրջանառության (իրացման) ծավալը, առավելագույնը՝ 10 միավոր.
- 2) դեղերի պատրաստում (կիրառելի է միայն դեղատնային գործունեության դեպքում), առավելագույնը՝ 10 միավոր.
- 3) թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի շրջանառություն, առավելագույնը՝ 20 միավոր.
- 4) միևնույն տնտեսավարող սուբյեկտին պատկանող դեղատների քանակը (կիրառելի է միայն դեղատնային գործունեության դեպքում), առավելագույնը՝ 10 միավոր.
- 5) տնտեսավարող սուբյեկտներում արձանագրված և սովյալ բնագավառին վերաբերող պարբերաբար խախտումները, առավելագույնը՝ 10 միավոր.
- 6) տնտեսավարող սուբյեկտներում խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, առավելագույնը՝ 10 միավոր.
- 7) ստուգաթերթերի հիման վրա գնահատված ռիսկայնության միավորը, առավելագույնը՝ 50 միավոր:

**Աղյուսակ N 11**

Նախորդ տարվա իրացման ծավալները (մլն դրամ)	Դեղերի պատրաստում	Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի շրջանառություն	Դեղատների քանակը	Պարբերաբար խախտումները	Խախտումների վերացմանն ուղղված գործողություններ	Ըստ ստուգաթերթի արդյունքների

Մինչև 50-ը ներառյալ	50-200-ը ներառյալ	200-ից ավելի	Այո	Ոչ	Այո	Ոչ	1	2-5	6 և ավելի			
4	6	10	10	0	20	0	8	10	6	Առավելագույնը 10	Առավելագույնը 10	Առավելագույնը 50

**VII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

25. Ոլորտային ռիսկը գնահատվում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների (ՏԳՏԴ) դասակարգմամբ գործառույթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում՝ համաձայն N 12 աղյուսակի, որի առավելագույն հնարավոր միավորը 100 է:

**Աղյուսակ N 12**

Կոդ	Գործունեության տեսակը	Միավորը
A (ԷՅ)	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	40
B (ԲԲ)	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	100
C (ՍԲ)	Մշակող արդյունաբերություն (բացառությամբ C21)	80
C21 (ՍԲ21)	Դեղագործական արտադրանքի արտադրություն	30
D (ԴԲ)	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	50
E (Բ)	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	70
F (ԷՖ)	Շինարարություն	60
G (ՋԲ)	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում (բացառությամբ G46.46.2, G47.73)	40
G 46.46.2 (ՋԲ 46.46.2)	Դեղերի մեծածախ առևտուր	10

G 47.73 (ՋԻ 47.73)	Դեղերի մանրաձախ առևտուր դեղատներում	10
H (ԷՅՁ)	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	30
I (ԱՅ)	Կացության և հանրային սննդի կազմակերպում	30
J (ՋԵՅ)	Տեղեկատվություն և կապ	50
K (ՔԷ)	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	10
L (ԷԼ)	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	10
M (ԷՄ)	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	10
N (ԷՆ)	Վարչարարական և օժանդակ գործունեություն	10
O (Օ)	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն	10
P (ՓԻ)	Կրթություն	10
Q (Քյու)	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	10
R (Առ)	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	10
S (Էս)	Սպասարկման այլ ծառայություններ	10
T (ԹԻ)	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	10
U (Յու)	Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն	0

26. Տնտեսավարող սուբյեկտներում անհատական ռիսկը գնահատվում է ըստ հետևյալ բաղադրիչների և նրանց ռիսկի միավորների հանրագումարն է, որի առավելագույն հնարավոր միավորը 100 է: Անհատական ռիսկի բաղադրիչներն են՝

1) աշխատողների ընդհանուր թիվը, առավելագույնը՝ 10 միավոր՝ համաձայն N 13 աղյուսակի.

**Աղյուսակ N 13**

Աշխատողների թիվը	Միավորը
1 - 10	1
11 - 100	3
101 - 200	5
201 և ավելի	10

2) Ընդհանուր աշխատողների սեռատարիքային կազմը, առավելագույնը՝ 5 միավոր՝ համաձայն N 14 աղյուսակի: Եթե միաժամանակ առկա են ստորև թվարկված պայմաններից մեկից ավելին, ապա այս չափանիշի գծով տնտեսավարող սուբյեկտի ռիսկը գնահատվում է այդ պայմանների դեպքում նախատեսված առավելագույն միավորով: Այդ պայմաններն են՝

- եթե մինչև 18 տարեկան արական սեռի աշխատողների թիվը չի գերազանցում աշխատողների ընդհանուր թվի 25 տոկոսը ներառյալ, ապա այս չափանիշի գծով տնտեսավարող սուբյեկտի ռիսկը գնահատվում է 2 միավոր, իսկ հակառակ դեպքում՝ 3 միավոր.

- եթե մինչև 18 տարեկան իգական սեռի աշխատողների թիվը չի գերազանցում աշխատողների ընդհանուր թվի 25 տոկոսը ներառյալ, ապա այս չափանիշի գծով տնտեսավարող սուբյեկտի ռիսկը գնահատվում է 4 միավոր, իսկ հակառակ դեպքում՝ 5 միավոր.

- եթե 18 տարեկան և բարձր իգական սեռի աշխատողների թիվը գերազանցում է աշխատողների ընդհանուր թվի 25 տոկոսը, ապա այս չափանիշի գծով տնտեսավարող սուբյեկտի ռիսկը գնահատվում է 3 միավոր, իսկ հակառակ դեպքում տրվում է 0 միավոր.

- եթե 18 տարեկան և բարձր արական սեռի աշխատողների թիվը չի գերազանցում կամ գերազանցում է աշխատողների ընդհանուր թվի 25 տոկոսը, ապա այս չափանիշի գծով տնտեսավարող սուբյեկտի ռիսկը գնահատվում է 0 միավոր.

**Աղյուսակ N 14**

Սեռատարիքային կազմը				
Տարիքը	Սեռը			
	արական		իգական	
	(0%, 25%]	(25%, 100%]	(0%, 25%]	(25%, 100%]
մինչև 18 տարեկան	2	3	4	5
18-ից բարձր	0	0	0	3

3) տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետևանքով աշխատավայրում նախորդ տարում ստորև նշված

դժբախտ դեպքերի և (կամ) մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած աշխատողների թվով որոշված՝  
ոչխակայության միավորների հանրագումարը կարող է կազմել առավելագույնը՝ 10 միավոր.

- մահվան էլքով գրանցված դժբախտ դեպքի և (կամ) մասնագիտական հիվանդության պարագայում ոչխակը  
գնահատվում է առավելագույն չափով՝ 10 միավոր.

- հաշմանդամության էլքով գրանցված դժբախտ դեպքի և (կամ) մասնագիտական հիվանդության պարագայում  
յուրաքանչյուր տուժած անձի համար 5 միավոր, առավելագույնը՝ 10 միավոր.

- ոչ հաշմանդամության էլքով դժբախտ դեպքի և (կամ) մասնագիտական հիվանդության պարագայում  
յուրաքանչյուր տուժած անձի համար 2 միավոր, առավելագույնը՝ 10 միավոր.

4) չձևակերպված աշխատողների թիվը, առավելագույնը՝ 5 միավոր, յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի  
համար 0,5 միավոր, իսկ 5 և ավելի չձևակերպված աշխատողների առկայության դեպքում՝ 5 միավոր.

5) տնտեսավարող սուբյեկտներում արձանագրված և տվյալ ոլորտին վերաբերող պարբերաբար խախտումները,  
առավելագույնը՝ 10 միավոր.

6) տնտեսավարող սուբյեկտներում խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, առավելագույնը՝ 10  
միավոր.

7) ստուգաթերթերի հիման վրա գնահատված ոչխակայության միավորը, առավելագույնը՝ 50 միավոր:

**VIII. ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

27. Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է՝ հաշվի առնելով տնտեսավարող  
սուբյեկտների ոչխակայությունը ստորև նշված համամասնությամբ և հաստատվում է մինչև ստուգումներին նախորդող  
տարվա դեկտեմբերի 1-ը: Ստուգումների տարեկան ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ Հայաստանի  
Հանրապետության վարչապետի համաձայնությամբ.

1) բարձր ոչխակայության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման  
ենթակա տնտեսավարող սուբյեկտների առնվազն յոթանասուն տոկոսը.

2) ցածր ոչխակայության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման  
ենթակա տնտեսավարող սուբյեկտների առավելագույնը հինգ տոկոսը:

28. Ստուգումների տարեկան ծրագիրը ներառում է հետևյալ տեղեկությունները՝

- 1) ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների լրիվ անվանումները.
- 2) յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտում անցկացված վերջին ստուգման ավարտի ամսաթիվը.
- 3) յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի ոչխակայությունը.
- 4) յուրաքանչյուր ստուգման անցկացման ժամանակահատվածը:

29. Տվյալ տարվա ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների ցանկերի ընտրությունը կատարվում է սույն  
մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ ըստ գնահատված ոչխակայության, համապատասխան ոլորտներով  
դասակարգված տնտեսավարող սուբյեկտներից: Իրատեսական ընտրություն կատարելու նպատակով՝ տեսչական  
մարմնի կողմից հաշվարկվում է տարվա կտրվածքով տնտեսավարող սուբյեկտների առավելագույն քանակը՝ որքանում  
հնարավոր է իրականացնել ստուգումներ՝ առկա կադրային ներուժի, տնտեսական, կազմակերպական և ֆինանսական  
կարողություններից ելնելով: Այդ քանակության շրջանակներում, ըստ առանձին չորս բնագավառների  
համամասնության, ընտրվում են բարձր, միջին և ցածր ոչխակայության խմբերում ընդգրկված տնտեսավարող  
սուբյեկտները: Ընդ որում՝ յուրաքանչյուր բնագավառում քանակային ընտրությունը համամասնությամբ կատարվում է՝  
տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար**

**Է. Աղաջանյան**